

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

«___» _____ 2016թ. N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N1079-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N22-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 131-Ն որոշման N 1 հավելվածի 43-րդ կետը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը, մասնագիտական հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1128-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1079-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝
 - 1) որոշման վերնագրում, 1-ին կետի 1-ին ենթակետում, 3-րդ կետում, 1-ին հավելվածի վերնագրում, 1-ին և 2-րդ կետերում «բնության և շրջակա միջավայրի» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով.
 - 2) ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և 2-րդ կետի 2-րդ ենթակետը.
 - 3) որոշման N 1 հավելվածի՝ 4-րդ կետում «նախնական հատկացման և ընթացիկ հատկացումների» բառերը փոխարինել «նախնական հատկացման, ընթացիկ հատկացումների և վերջնական հատկացման» բառերով.
 - 4) որոշման N 1 հավելվածի՝ 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«9. Հանքի փակման, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման և/կամ հրաժարման դեպքում վերջին տարվա համար հատկացումները կատարվում են այդ գործընթացների ժամանակ՝ 13.1 կետին համապատասխան դրամագլխի վերջնական հատկացումների չափով:».

5) որոշման N 1 հավելվածի՝ 10-րդ կետում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին)» բառակապակցությամբ.

6) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-րդ կետով.

«13.1. Դրամագլխի վերջնական հատկացումների չափը հաշվարկվում է հետևյալ կերպ.

ԴՎՀ=ՎՀԲ-ՓՎԴ, որտեղ՝

1) ԴՎՀ-ն դրամագլխին կատարվող վերջնական հատկացումների չափն է՝ հազ. դրամներով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ.

2) ՎՀԲ-ն հանքի փակման վերջնական ծրագրով, ընդերքօգտագործման իրավունքի հրաժարման դիմումին կից ներկայացված խախտված հողերի վերականգման (ռեկուլտիվացիա) ծրագրով նախատեսված, իսկ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման գործընթացի ժամանակ՝ փաստացի խախտված հողերի վերականգնման համար հաշվարկված հատկացումների չափն է՝ հազ. դրամներով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:».

3) ՓՎԴ-ն դրամագլխին փաստացի վճարված գումարների չափն է՝ հանքի փակման, հրաժարման, դադարեցման գործընթացների ժամանակ.

7) որոշման N 1 հավելվածի՝ 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Սույն կարգի համաձայն ընդերքօգտագործողի դրամագլխից հատկացումներ են կատարվում լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ:».

8) որոշման N 1 հավելվածի՝ 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Լիազոր մարմինը սույն կարգի 17-րդ կետում նշված կատարողական ակտերն ստանալու օրվանից հետո 15-օրյա ժամկետում իրականացնում է ուսումնասիրություն՝ ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման հավաստիությունն ու որակը կատարողական ակտերին համապատասխանությունը որոշելու նպատակով և ընդունում է որոշում ընդերքօգտագործողին դրամագլխից գումար հատկացնելու կամ չհատկացնելու մասին: Ընդունված որոշման մեկ օրինակը լիազոր մարմնի կողմից 5-օրյա ժամկետում տրամադրվում է ընդերքօգտագործողին:».

9) որոշման N 1 հավելվածի 19-րդ կետում «որը» բառից հետո հանել «մասնագիտական հանձնաժողովի՝ ռեկուլտիվացիոն աշխատանքների վերաբերյալ դրական եզրակացության առկայության դեպքում» բառերը.

10) որոշման N 1 հավելվածի 21-րդ կետում «հիմք է» բառից հետո հանել «մասնագիտական հանձնաժողովի բացասական եզրակացությունը, մասնավորապես» բառերը.

11) որոշման N 1 հավելվածի 25-րդ կետի 1-ին ենթակետից հանել «, մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, » բառերը.

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների

չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N 22-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման N 2 հավելվածի՝ 4-րդ կետում «նախնական հատկացման և ընթացիկ հատկացումների» բառերը փոխարինել «նախնական հատկացման, ընթացիկ հատկացումների և վերջնական հատկացման» բառերով.

2) որոշման N 2 հավելվածի՝ 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հանքի փակման, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման և/կամ հրաժարման դեպքում վերջին տարվա համար հատկացումները կատարվում են այդ գործընթացների ժամանակ՝ 10.1 կետին համապատասխան մշտադիտարկումների վերջնական հատկացումների չափով:».

3) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-րդ կետով.

«10.1 Մշտադիտարկումների վերջնական հատկացումների չափը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

ՄՎՀ=ՎՀԲ- ՓՎՄ, որտեղ՝

1) ՄՎՀ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող վերջնական հատկացումների չափն է՝ հազ. դրամներով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ.

2) ՎՀԲ-ն հանքի փակման վերջնական ծրագրով, ընդերքօգտագործման իրավունքի հրաժարման դիմումին կից ներկայացված փակման ծրագրով մշտադիտարկումների համար նախատեսված, իսկ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման գործընթացի ժամանակ՝ մշտադիտարկումների համար հաշվարկված հատկացումների չափն է՝ հազ. դրամներով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:».

3) ՓՎՄ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով փաստացի վճարված գումարների չափն է՝ հանքի փակման, հրաժարման, դադարեցման գործընթացների ժամանակ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Նախագծի մշակումը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում խախտված հողերի վերականգման աշխատանքների իրականացումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցումը ապահովելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները. Գործող օրենսդրության համաձայն նախատեսված են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման վճարներ:

Խնդիրը կայանում է նրանում, որ վերոնշյալ վճարները իրականացվում են նախնական և ընթացիկ հատկացումներով, որոնք հաշվարկվում են աշխատանքային նախագծում և/կամ ծրագրում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ: Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամկետները երկարատև են (մինչև 50 տարի) և այդ ժամանակահատվածում հանքի շահագործման ընթացքում տեղի է ունենում փաստացի իրավիճակների փոփոխություն (խախտված հողերի փաստացի մակերեսների, մշտադիտարկումների իրականացման ծրագրերի և այլն), ինչպես նաև գնաճի արդյունքում վճարված գումարների արժեզրկում, որոնք հետագայում չեն կարող ապահովել խախտված հողերի վերականգնման աշխատանքների և հանքի փակումից հետո մշտադիտարկումների իրականացումը: Ընդ որում, «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով՝ հանքի փակումից 2 տարի առաջ ներկայացվում է հանքի փակման վերջնական ծրագիր, հրաժարման դիմումին կից ներկայացվում է խախտված հողերի վերականգման (ռեկուլտիվացիա) ծրագիր, որտեղ ներկայացված դրամագլխի և մշտադիտարկումների հատկացումների գումարների չափերը համապատասխանում են փաստացի իրավիճակին և պետք է ապահովեն վերը նշված աշխատանքների իրականացումը: Անհամապատասխանությունը կարգավորելու համար առաջարկվում է վերջնական հատկացումների գաղափարը, որը կլուծի ներկայացված խնդիրը:

Իսկ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման մասնագիտական հանձնաժողովի աշխատակարգի համաձայն (ՀՀ բնապահպանության նախարարության 22 նոյեմբերի 2012 թվականի N 309-Ա հրաման) ընդերքօգտագործողի դրամագլխից հատկացումներ կատարելու նպատակով լիազոր մարմնի կողմից որոշում ընդունելու համար՝ կատարված ռեկուլտիվացիոն աշխատանքների հավաստիության և կատարման որակի վերաբերյալ տրվում է մասնագիտական հանձնաժողովի եզրակացություն, ինչը բարդացնում և երկարացնում է հատկացումներ կատարելու և աշխատանքների

իրականացման գործընթացը, ինչի մասին նշել է նաև Համաշխարհային բանկի փորձագիտական թիմը ԱԱ-SUԾ ծրագրի բաղադրիչ՝ Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարական գնահատում ծրագրի քննարկումների՝ այդ թվում շրջակա միջավայրի դրամագլխի կառավարմանը վերաբերող հարցերի շրջանակներում:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցման և խախտված հողերի վերականգման ապահովմանը:

3. Կարգավորման նպատակը և բնույթը. Նախագծի նպատակը բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի վճարների և օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման վճարների կարգավորումն է, ընդերքօգտագործողին դրամագլխից հատկացումներ կատարելու նպատակով՝ լիազոր մարմնի կողմից որոշում կայացնելու գործընթացի պարզեցումը, ինչպես նաև այդ աշխատանքների կատարման ապահովումը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

5. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցումը, խախտված հողերի վերականգնումը և օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության առողջությունն ու անվտանգությունը:

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների նվազեցում չի առաջանում: